

Չորրորդ հաղորդում

Տապանակի և խորանի պատմությունը

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 4:1-7:2

- I. **Քրիստոսը ձեռք է բերել մեզ, որպեսզի մենք ձեռք բերենք Նրան, այնպես որ Աստված ներկառուցվի մեր մեջ, իսկ մենք ներկառուցվենք Նրա մեջ ու դառնանք ընդհանրական Աստվածամարդ՝ եկեղեցու՝ որպես Աստծու խորանի իրականությունը, որը կենդանի Աստծու տունն է, Աստծու և մարդու փոխբնակատեղը՝ Փլպ 3:8, 12-14, Հվի 1:14, Հյտ 21:2-3, 7:15, Ա Տմք 3:15, Հվի 14:2, 23:**
- II. **Որպեսզի մտնենք Քրիստոսի Մարմնի իրականության մեջ, պետք է տեսնենք Տապանակի խորքային նշանակությունը.**
 - Ա. Տապանակը Քրիստոսի՝ որպես Իր ժողովրդի հետ Եռամեկ Աստծու ներկայության նախատիպն է Իր տնտեսությունն իրագործելու համար, որպեսզի հաստատվի Իր թագավորությունը երկրի վրա՝ Մտք 1:23:
 - Բ. Տապանակը խորանի կենտրոնն ու բովանդակությունն էր և խորհրդապատկերում է Քրիստոսին՝ որպես եկեղեցու կենտրոնի ու բովանդակության. այն, որ Տապանակն առաջինն է հիշատակվում խորանի տեսության մեջ, ցույց է տալիս, որ Քրիստոսը եկեղեցում առաջնության տեղն է զբաղեցնում՝ Ելց 25:22, Կղս 1:17բ, 18բ.
 1. Տապանակը պարունակում էր օրենքի տախտակները՝ որպես Աստծու վկայություն, այն բանի արտահայտություն ու հայտնություն, ինչ Աստված է՝ Ելց 25:16, 31:18:
 2. Սրբությունների Սրբությունում գտնվող Տապանակը խորհրդապատկերում է Քրիստոսին՝ որպես Աստծու բնակատեղի կենտրոնի՝ եկեղեցու (Եփս 2:21-22), և եկեղեցու՝ որպես Աստծու տան բովանդակության (Ա Տմք 3:15-16, հմնտ Ա Թգ 4:22, Հյտ 3:20):
 - Գ. Ակացիայի փայտից Տապանակը, որը ոսկով էր պատված, խորհրդապատկերում է պնևմատիկ Քրիստոսին՝ որպես Աստծու մարմնավորման և որպես մարդկայության հետ աստվածայության միաձուլման՝ մարդու հետ Աստծու կառույցի, ով բնակվում է մեր հոգում, որպեսզի մենք կարողանանք հպվել Աստծուն և վայելել Աստծուն՝ Բ Տմք 4:22, Բ Կրթ 3:17, Կղս 2:9, Եբր 9:4.
 1. Ակացիայի փայտը խորհրդապատկերում է Քրիստոսի մարդկայությունը՝ ուժեղ բնավորությամբ և բարձր չափանիշով՝ որպես Աստծուն արտահայտելու հիմնական էահիմքը՝ Ելց 25:10, Մտք 3:16, 4:4, 8:20, 9:12-13, 11:29, 12:19-20, 17:27, 20:28, 27:12, 14, Մրկ 1:35, 6:39-40, Հվի 6:12, 7:6, հմնտ Գրծ 16:7:
 2. Ակացիայի փայտի՝ ներսից և դրսից ոսկով պատված լինելը նշանակում է, որ աստվածային բնությունը թափանցում է մարդկային

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

բնության մեջ և հանգստանում մարդկային բնության վրա, ինչի շնորհիվ այն կարող է արտահայտվել մարդկային բնության միջոցով՝ Ելց 25:11, Հյտ 3:18ա, Բ Պտ 1:4, հմմտ Հյտ 17:4:

Դ. Տապանակի ողորման կափարիչը խորհրդապատկերում է Քրիստոսին՝ որպես Աստծու և Իր փրկագնված մարդկանց հանդիպման վայրի՝ Ելց 25:17-22.

1. Քրիստոսը Ողորդն է (Եբր 2:17)՝ Նա, ով խաղաղեցնում է հարաբերությունը Աստծու և մեր միջև, Նա, ով մեզ հաշտեցնում է Աստծու հետ՝ բավարարելով Աստծու պահանջները Իր՝ որպես ողորման զոհի միջոցով (Ա Հվի 2:2, 4:10):

2. Քրիստոսը նաև ողորման կափարիչն է՝ Իր աստվածայնության շողալով և Իր մարդկայնության փրկագնմամբ հանդերձ, այն վայրը, որտեղ վայելում ենք ողորմմն Աստծու առջև և որտեղ կարող ենք հանդիպել ու հաղորդակցվել մեր արդար, սուրբ ու փառավոր Աստծու հետ՝ ընդունելով Նրան՝ որպես շնորհքի՝ Հռմ 3:25, Եբր 4:16.

ա. Ողորման կափարիչի վրայի երկու ոսկե քերովբեները ցույց են տալիս, որ Աստծու փառքը շողում է Քրիստոսից (Ելց 25:18-20). այն, որ Տապանակի ողորման կափարիչը ցողվում էր ողորման զոհի արյունով, նշանակում է, որ Քրիստոսի փրկագնման արյան միջոցով կարող ենք հաղորդակցություն ունենալ արդար Աստծու հետ Նրա փառքի մեջտեղում (Ղտց 16:14-15):

բ. Որքան շատ Աստված հանդիպի մեզ հետ ու խոսի մեզ հետ, և որքան շատ մենք հանդիպենք Աստծու հետ ու լսենք Նրա խոսելը, այնքան շատ Աստծու վկայություն կլինի մեր փորձառության մեջ:

III. Տապանակի և խորանի պատմությունը պատկերում է Աստծու սրտի ցանկությունը, եկեղեցու ամայացումը և եկեղեցու վերականգնումն Աստծու վկայության՝ Աստծու արտահայտության համար՝ Ելց 25:9-10, 26:26-30, 40:38.

Ա. Որպես խորանի կենտրոնն ու բովանդակությունը՝ Տապանակը խորհրդապատկերում է Քրիստոսին՝ որպես եկեղեցու, Աստծու խորանի, Աստծու տան, Աստծու ընդհանրական արտահայտության կենտրոնի և բովանդակության՝ 25:22, 40:21, Կղս 2:9, Եփս 2:21-22, Ա Տմբ 3:15:

Բ. Իր պատմության առաջին փուլում Տապանակը խորանի մեջ էր. սա նշանակում է, որ նորմալ եկեղեցին Քրիստոսի արտահայտությունն էր, իսկ Քրիստոսը եկեղեցու բովանդակությունն էր, սակայն Տապանակն ի վերջո անջատվեց խորանից. սա նշանակում է, որ եկեղեցին դարձավ դեգրադացված ու կորցրեց Քրիստոսի իրականությունն ու ներկայությունը՝ Ելց 40:34-35, Ա Թգ 4:1-7:2:

Գ. Տապանակը Քրիստոսի նախատիպն է՝ որպես Աստծու մարմնավորման և որպես Իր ժողովրդի հետ Եռամեկ Աստծու ներկայության՝ Իր տնտեսությունն իրագործելու համար, որպեսզի հաստատվի Իր թագավորութ-

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻՐ

յունը երկրի վրա (Հս 3:3, 10-17). այն, որ նրանք դուրս բերեցին Տապանակը, նշանակում էր, որ նրանք դուրս բերեցին Աստծու ներկայությունը (Թվց 10:33-36, Ա Թգ 4:3-4):

- Դ. Տապանակի շարժումը երկրի վրա Քրիստոսի՝ որպես Աստծու մարմնավորման մեջ Աստծու շարժման նկարն էր (Սղմ 68:1-18). սակայն փղշտացիների հետ Իսրայելի մարտնչելու ժամանակ Աստված շարժվելու մտադրություն չունեց:
- Ե. Իսրայելի զավակներն Աստծու տնտեսության մասին չէին մտածում և դրա համար չէին հոգում, և այն, որ նրանք Տապանակը դուրս բերեցին, որպեսզի մարտնչեին փղշտացիների դեմ, ցույց է տալիս, որ նրանք Աստծուն օգտագործում էին իրենց շահերի համար՝ Նրան պարտադրելով, որ իրենց հետ դուրս գա իրենց ապահովության, խաղաղության, հանգստի ու շահի համար:
- Զ. Սկզբունքորեն մենք նույն բանն ենք անում, երբ աղոթում ենք մեր բարգավաճման համար՝ առանց հաշվի առնելու Աստծու տնտեսությունը. Աստծուն հանուն մեր շահերի օգտագործելու փոխարեն մենք պետք է աղոթենք, ապրենք և լինենք Սամուելի նման մարդիկ՝ Աստծու սրտի համաձայն և Նրա տնտեսության համար:
- Է. Այսօր մարդիկ Աստծու վկայությունը փոխարինում են մարդկային կարիքով. դեգրադացիան սկսվում է, և խնդիրները բարձրանում են այն ժամանակ, երբ մարդկային կարիքը փոխարինում է Աստծու վկայությանը. Տապանակը ոչ միայն Աստծու Տապանակն էր (Ա Թգ 4:11, 13, 17-19, 21-22), այլև Վկայության Տապանակը (Ելց 25:22, 40:21):
- Ը. Իսրայելը պետք է ապաշխարեր, հանգամանալի խոստովանություն աներ, վերադառնար Աստծուն իր կոռւքերից և Աստծուց հարցներ, թե Նա ինչ էր ուզում, որ ինքն աներ:
- Թ. Փոխարենը նրանք, սիրտ չունենալով Աստծու ցանկության և Նրա հավիտենական տնտեսության համար, սնահավատորեն ապավինեցին Տապանակին՝ հիմնվելով իրենց անցած հաղթանակների վրա, որ տարել էին Տապանակի շարժման միջոցով:
- Ժ. Իսրայելի դեգրադացիայի պատճառով փղշտացիները հափշտակեցին Տապանակը, և այն առանձնացվեց խորանից՝ թողնելով խորանը որպես դատարկ զետեղարան՝ առանց իրականության, առանց պատշաճ բովանդակության (Ա Թգ 4:11-6:1). սա նշանակում է, որ իր պատմության երկրորդ փուլում եկեղեցին դարձավ դեգրադացված և կորցրեց Քրիստոսի իրականությունն ու ներկայությունը (զգ. 3-4, Հյտ 3:20):
- ԺԱ. Իր դեգրադացիայի մեջ Իսրայելն անմիտ էր, որովհետև նրանք անմիջականորեն Աստծուն չապավինեցին. նրանք ապավինեցին Աստծու սահմանած համակարգերին. Աստծու Տապանակը խորանից դուրս բերելուց առաջ նրանք պետք է հարցնեին Աստծուն, ինչպես չեսուն վարվեց Երիբովում (Հս 6:2-4, հմմտ 9:14):
- ԺԲ. Մեր հոգու խորքերից պետք է ասենք Տիրոջը. «Տե՛ր, ես այստեղ՝ երկրի վրա, ապրում եմ ոչ հանուն իմ առողջության, իմ բարգավաճման, իմ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

ապահովության, իմ խաղաղության, իմ հանգստի կամ իմ շահի. քանի որ ես ուզում եմ ճշմարիտ հաղթող ուխտավոր լինել, ով համագործակցում է Քեզ հետ Քո տնտեսության իրականացման համար, ես Քեզ հարցնում եմ, թե ինչ կա Քո սրտում իմ առնչությամբ»՝ Ա Թգ 2:30բ, 35, ԹՎց 6:1-9, հմմտ Գ Թգ 8:48, Երմ 32:39:

ԺԳ. Իրենց դեգրադացիայի մեջ Իսրայելի զավակները ծայրաստիճան վիրավորեցին Աստծուն, և Աստված թողեց նրանց. արդյունքում Տապանակն Իսրայելին ազատելու փոխարեն ինքը գերեվարվեց, և Աստծու փառքը հեռացավ Իսրայելից (Ա Թգ 2:30, 34, 4:10-18, 22, Սղմ 78:61). «անտապանակ» լինել նշանակում է «անքրիստոս» լինել, իսկ «անքրիստոս» լինել նշանակում է ստանալ «Իքսաբողիմ», ինչը նշանակում է «անփառունակություն» (Ա Թգ 4:21-22, Հյտ 3:20):

IV. Ավելի ուշ Տապանակը վերականգնվեց և վերադարձվեց ու բերվեց նախ՝ Աբինադաբի տուն՝ Կարիաթ-արիմ, որտեղ այն մնաց քսան տարի (Ա Թգ 6:2-7:2), այնուհետև՝ գեթացի Աբդեղոմի տուն, որտեղ այն երեք ամիս մնաց (Բ Թգ 6:1-11, հմմտ Ա Թգ 1:24, Հս 18:1). սա նշանակում է, որ երկրորդ դարից սկսած ժամանակ առ ժամանակ «աբդեղոմներ» էին բարձրացվում, որոնք ունեին Տիրոջ ներկայությունը (Տապանակը), բայց չունեին պատշաճ եկեղեցական կյանք՝ որպես Քրիստոսի արտահայտությունը (խորանը):

V. Դավիթը Տապանակն Աբդեղոմի տնից տեղափոխեց այն վրանը, որ կանգնեցրել էր դրա համար իր քաղաքում՝ Սիոն լեռան վրա՝ Երուսաղեմի ամենաընտիր վայրում (Բ Թգ 6:12-19, Ա Մնց 15:1-16:1). սա քայլ առաջ էր, բայց Տապանակը դեռևս անպատշաճ վայրում էր, որովհետև դեռ խորան չէր վերադարձվել.

Ա. Այս իրավիճակը նշանակում է, որ այլ հավատացյալներ, որոնք Դավթի պես հոգում էին Աստծու շահերի համար, փորձել են կիրարկել եկեղեցական կյանքը՝ համաձայն իրենց սեփական ընտրության, ոչ թե համաձայն Աստծու հայտնության:

Բ. Այս հավատացյալներն ունեին Քրիստոսին, բայց Նրան ունեին եկեղեցական կյանքի անպատշաճ կիրարկմամբ (ինչի նախատիպը Դավթի վրանն է Երուսաղեմում)՝ հմմտ Գ Թգ 3:3-15:

VI. Ի վերջո՝ այն բանից հետո, երբ Սողոմոնն ավարտեց տաճարի կառուցումը Երուսաղեմում, Տապանակը տեղափոխվեց տաճարում եղող Սրբությունների Սրբություն՝ նորմալ իրավիճակի լիակատար վերականգնման համար. այսօր Իր վերականգնման մեջ Տերն աշխատում է նորմալ իրավիճակի վերստեղծման վրա, որպեսզի Քրիստոսը լինի պատշաճ եկեղեցում՝ որպես Քրիստոսի Մարմնի իրականության մեջ՝ Իր արտահայտության համար՝ 8:1-11, 48, Եփս 2:21-22, 3:16-21:

VII. Տապանակի և խորանի պատմությունը եկեղեցու պատմության նախանկարն է, որը մեզ ներկայացնում է եկեղեցու ընթացքի և իրավիճակի լիակատար նկարը՝ հենց սկզբից մինչև ներկա ժամանակը. այս պատմության հինգ գլխավոր տեսանկյուն կա.

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- Ա. Առաջին իրավիճակը Քրիստոսին իր մեջ ունեցող եկեղեցու իրավիճակն է. սրա նախատիպը Տապանակն է խորանի մեջ՝ Տապանակով՝ որպես բովանդակությամբ և խորանով՝ որպես դրա արտահայտությամբ. սա եկեղեցու առաջին փուլի նկարն է այն բացարձակ նորմալ վիճակում, որտեղ Քրիստոսը եկեղեցու բովանդակությունն է, իսկ եկեղեցին՝ Քրիստոսի արտահայտությունը՝ Ելց 40:34-38, Եփս 3:16-21:
- Բ. Երկրորդ իրավիճակը իր մեջ Քրիստոսին չունեցող եկեղեցին է. սրա նախատիպն այն է, որ Տապանակը հափշտակվում ու առանձնացվում է խորանից՝ Աստծու ժողովրդի ձախողման պատճառով. այն որ խորանը դատարկվում է, պատկերում է քրիստոնյաների ձախողումները, որոնց պատճառով եկեղեցին կորցրեց Քրիստոսի իրականությունն ու ներկայությունը՝ Հյտ 2:4-5, 3:20:
- Գ. Երրորդ իրավիճակը եկեղեցի չունեցող Քրիստոսն է. սրա նախատիպը առանց խորանի Տապանակն է. նախ՝ Արինադարի տանը Կարիաթարինում քսան տարի (Ա Թգ 7:1-2) և ապա՝ գեթացի Աբդեղոմի տանը երեք ամիս (Բ Թգ 6:10-12) Տապանակն առանձին էր խորանից. եկեղեցու պատմությունը բացահայտում է, որ երկրորդ դարից մինչև ներկա ժամանակը բազմաթիվ «աբդեղոմներ» են եղել:
- Դ. Չորրորդ իրավիճակը անհամապատասխան եկեղեցով Քրիստոսի իրավիճակն է. Դավիթը Երուսաղեմում Տապանակի համար վրան էր պատրաստել, բայց այն չէր համապատասխանում Աստծու՝ Մովսեսին ցույց տված նմուշին. բազմաթիվ քրիստոնյաներ ունեն Տապանակը՝ Քրիստոսին՝ անհամապատասխան եկեղեցով հանդերձ՝ խ. 17, Ա Մնց 15:1, Բ Մնց 1:4, Ելց 25:9:
- Ե. Հինգերորդ իրավիճակը պատշաճ եկեղեցի ունեցող Քրիստոսի իրավիճակն է. սրա նախատիպը Տապանակն է՝ պատշաճ խորանով հանդերձ, որն ընդլայնվել ու մեծացել է՝ դառնալով տաճար. մենք մեզ, բառի լիակատար իմաստով, տանն ենք զգում հենց այս իրավիճակում, որտեղ կա Քրիստոսը՝ որպես իրականություն՝ պատշաճ եկեղեցով՝ որպես Իր արտահայտությամբ հանդերձ՝ Սղմ 90:1-2, 91:1-16, 92:12-15, 132:5, 8, Ա Մնց 28:11-20, Բ Մնց 3:1: